

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ԲԱՆԻԲԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ

3(126)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

ԵՐԵՎԱՆ - 2008

Գ. Ռ. Հայրապետյան - Հայ հոգեբանական ժառանգության մոռացված էջերից մեկը (<i>նվիրվում է ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին</i>)	164
Լ. Գ. Սիմոնյան - Մի էջ պոլսահայ երգիծաբերթերի բանավեճի պատմությունից	172
Վ. Գ. Պետրոսյան - Օրենսդրության և ժուռնալիստական էթիկայի փոխհարաբերության հարցի շուրջ	178
Գ. Ռ. Բարսեղյան - Մարզական գովազդի լեզվաճական առանձնահատկությունները անգլալեզու ամսագրերում	183

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Ս. Ս. Երիցյան, Ա. Գ. Ճուղուրյան - Ուսանողների ակադեմիական ազատությունների հիմնահարցերը բուհական համակարգում	191
«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի 2008 թ. համարների բովանդակությունը	197

ՀԱՅ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՈՌԱՑՎԱԾ ԷԶԵՐԻՑ ՍԵԿԸ

Դ. Ռ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հայ հոգեբանական միտքն առանձնանում է իր զարգացման տարերայնությամբ: Սա հիմնականում բացատրվում է գիտական դպրոցների բացակայությամբ, երբ յուրաքանչյուր նոր սերունդ սկսում է դատարկ էջից: Չնայած հայ հոգեբանները մեծ ներդրում ունեն ինչպես մեր, այնպես էլ համաշխարհային գիտության մեջ, սակայն մինչ այժմ չունենք հայ հոգեբանական մտքի ամփոփ պատմություն:

Այսօր, երբ Հայաստանի մայր բուհը՝ Երևանի պետական համալսարանը, բուրրում է գիտական և կրթական բեղուն գործունեության ինը տասնամյակը, ճիշտ ժամանակն է անդրադառնալու նրա հիմնադիր դասախոսներից Գուրգեն Էդիլյանի հարուստ գիտական գործունեության մոռացված էջերից մեկին: Անհատի պաշտամունքի փոխ է նաև մեծանուն հայ գիտնական Գուրգեն Էդիլյանը: Ստացության են մատնվել հատկապես նրա հոգեելզվաբանական հետազոտությունները՝ նվիրված հայկական տառատեսակի ընկալման առանձնահատկություններին:

Լ.Պ. Ալեքսանյանն իր «Գուրգեն Էդիլյան» աշխատության մեջ ընդամենը մեկ էջի սահմաններում է անդրադարձ կատարել այս հետազոտություններին. «Խորհրդային շրջանում մեր մշակույթի աննախընթաց վերելքի հետ ընդգծվում է նաև տպագրական գործը: Սակայն հայկական տառատեսակը, որով տպագրվում էին գրքերը, ուներ մի շարք թերություններ: Ուստի 30-ական թվականներին խնդիր է դրվում բարեփոխել հայկական տառատեսակն այնպես, որ հեշտանա ընթերցանությունը, գեղեցկանան տառերը, համեմատաբար քիչ տեղ գրավեն, հնարավորություն տան թղթի խնայողության համար և հեշտանա տպագրության գործը: Պետական և հասարակական նշանակություն ունեցող այդ պատասխանատու գործը հանձարարվում է Գ. Էդիլյանին: Նա գտնում է, որ տառերի բարեփոխումն այն դեպքում միայն դրական արդյունք կտա, երբ գործածության մեջ եղած տառերը նախօրոք ուսումնասիրվեն բազմակողմանիորեն և ցույց տրվեն նրանց արժեքավոր և պակասավոր կողմերը: Այդ նպատակով Մոսկվայի հոգեբանության ինստիտուտում Գ. Էդիլյանը զբաղվում է նաև հայկական տառատեսակի ընթերցելիության հարցերով: Նա փորձարարական ստուգումների է ենթարկում ավելի քան 265 մարդու, յուրաքանչյուրի համար փորձը կրկնելով 25-26 անգամ: Գիտական իր հետազոտությունները Գ. Էդիլյանը հրատարակում է առանձին աշխատություններով»¹:

Այս մեջբերումը Գուրգեն Էդիլյանի առնվազն երեք տարի տևած մի շարք ծանրակշիռ փորձարարական հետազոտությունների միակ գրավոր գնահատականն է, այնինչ հեղինակը հրատարակել է հինգ գրքույկ՝ ավելի քան 200 էջ ընդհանուր ծավալով: Փաստորեն հոգեելզվաբանության պաշտոնական սկզբնավորումից 20 տարի առաջ հայ հոգեբանն ուսումնասիրել է տառատեսակի ընկալման,

¹ Լ. Պ. Ալեքսանյան, Գուրգեն Էդիլյան, Եր., 1973, էջ 46-47:

դրա դյուրընթեռնելիության հիմնահարցերը, հյատարակել աշխատություններ, գեկուցմամբ հանդես եկել Մոսկվայում և արժանացել բարձր գնահատանքի, իսկ հայ հոգեբանական միտքը ոչ միայն ըստ արժանվույն չի գնահատել նրան, այլև մոռացության է մատնել: Առավել ցավալի է, երբ վերոհիշյալ աշխատությունները գտնվում են Ազգային գրադարանում (նույնիսկ ԵՊՀ գրադարանում չկան ԵՊՀ հիմնադիր դասախոսներից մեկի և 1921-22 թթ. մանկավարժության ֆակուլտետի ղեկանի աշխատությունները), և տպված օրվանից ի վեր ոչ ոք չի ընթերցել. այդ է վկայում խունացած էջերի թերթված չլինելը:

Գ. Էդիլյանի վերոհիշյալ մեծածավալ փորձարարական հետազոտությունների ուսումնասիրումը հնարավորություն կընձեռի նորովի գնահատելու հայկական տառատեսակների սկզբնավորման մի քանի խնդիրներ:

1933թ. մայիսի 25-ին առաջինը տպագրության ստորագրված «Հայկական երկու տեսակ շրիֆտ և 3 1/2, 5 և 6 կվադրատ երկարության տողերի դյուրընթեռնելիության խնդիրը» աշխատությունը Գ. Էդիլյանը սկսում է ուսումնասիրության նպատակի շարադրմամբ: «Ուսումնասիրել գիտական տվյալների համաձայն այս հարցերը,- նշում է Գ. Էդիլյանը,- և գտնել այս հարցերի ճիշտ պատասխանները, նշանակում է մեծապես նպաստել կուլտուրական հեղափոխության՝ զիրքը մոտեցնելով մասսաներին ոչ միայն բովանդակության, այլև արտաքին ձևավորման տեսանկյունից»²: Գ. Էդիլյանն անդրադարձ է կատարում խնդրի նախապատմությանը, որը վկայում է, որ հեղինակը փորձարարական աշխատանքը կատարել է ոչ թե Մոսկվայում, այլ Երևանում: Խնդիրն այն է, որ 1931-ին Խորհրդային Ռուսաստանի պետիրատի և պոլիգրաֆիական ինստիտուտի հանձնարարականով Մոսկվայի հոգեբանության ինստիտուտում Վ. Ա. Արտյոմովի նախագահությամբ կատարվում է ուսական երկու տառատեսակի և տողերի երկարության փորձարարական հետազոտություն: Գիտական խմբի գլխավոր մասնագետ էր նաև Գ. Էդիլյանը: Վերադառնալով Հայաստան՝ Գ. Էդիլյանը մնանառիպ հանձնարարական է ստանում Հայ պետիրատի ղեկավարությունից և սկսում իր փորձարարական հետազոտությունները: Իսկ «Պետիրատի» վարչության առաջ քաշած խնդիրները երկուսն էին.

ա) զանգվածաբար օգտագործվող գրքի ոչ 8 կուրպուս և դրան մոտ նույն մեծության «Արամյան» տառատեսակներից ո՞րն է ավելի հեշտ կադրացվում,
բ) լրագրերի և գրքերի մեջ գործածվող երեք և կես, հինգ և վեց կվադրատի տողերից ո՞րն է ավելի դյուրընթեռնելի:

Առաջ քաշված խնդիրները ներկայացնելուց հետո Գ. Էդիլյանը իրեն բնորոշ հետևողականությամբ ներկայացնում է փորձի ընթացքը հետևյալ բաժիններով.

- փորձերի մատերիալը,
- փորձերի մեթոդիկան,
- ուսումնասիրության արդյունքները,
- եզրակացություն բանվորների կարդալու մասին,
- եզրակացություն ուսանողների կարդալու մասին,
- ընդհանուր եզրակացություն:

Այս աշխատանքում Գ. Էդիլյանը կատարում է մի շարք գիտական նորամուծություններ, որոնք ստորև կքննարկենք:

Գ. Էդիլյանը որպես փորձարարական նյութ ընտրել է առավել շատ կարդացվող Ս. Մոմոտովի «Փարիզի կոմունան» զիրքը, որից առանձնացրել է 25-ական նախադասություն՝ դասավորված վեց տարբեր խմբերում՝ կախված երկու տառատեսակի

² Գ. Էդիլյան, Հայկական երկու տեսակ շրիֆտ և 3 1/2, 5 և 6 կվադրատ երկարության տողերի դյուրընթեռնելիության խնդիրը, Եր., 1933, էջ 3:

և տողերի երեք տարբեր երկարության համադրությունից: Սակայն փորձարարական տվյալներն առավել հավաստի դարձնելու համար Գ. Էդիլյանը ընտրել է նաև նյութի երկրորդ բաժին Ն. Սարգսյանի «Կենդանաբանություն» դասագրքից: Բովանդակային տեքստերի թույլ կողմերը ստուգելու համար Գ. Էդիլյանը մշակում է նաև նյութի մի նոր, հավելյալ համակազմ՝ 3-ից 10 տառերից բաղկացած առանձին բառերից: Այս ծավալուն նյութի հիման վրա մշակվում է հետազոտական երկու տեսակի թեստ՝ յուրաքանչյուրը 216 բառից բաղկացած: Ընդ որում, տառատեսակի ընկալման վրա հետազոտվողների ընկալման փորձի ազդեցությունը չեզոքացնելու համար Գ. Էդիլյանը կազմում է նաև ստուգիչ խումբ երկրորդ և երրորդ դասարանի աշակերտներից:

Մշակվում է նաև բավականին մանրակրկիտ հրահանգ, որում հաշվի են առնվում բոլոր հնարավոր հարցերի պատասխանները և ուղղորդումներն աշխատանքի ճշգրիտ կատարման համար: Միայն այս հետազոտությանը մասնակցում են 152 մարդ՝ մանկավարժական ինստիտուտից, Ձերժինսկու անվան 7-ամյա բանվորական դպրոցից և մախադարյոցական մանկավարժական տեխնիկումից:

Գ. Էդիլյանը նախանձախնդրորեն վերլուծում է հավաքված բոլոր տվյալները՝ ըստ դրանց ստացման փուլերի, որոնք ամփոփում է համապատասխան աղյուսակներում, դուրս բերում բոլոր հնարավոր օրինակափոխությունները:

Արդյունքում նա հանգում է հետևյալ ընդհանուր եզրակացությունների.

1. կարդացողը բառերը կարդում է ոչ թե տառ-տառ, այլ դեկավարվում է ընդհանուր տպավորությամբ, բառերի ամբողջական պատկերների ըմբռնմամբ,

2. «Արամյան» ուղղահայաց տառատեսակն ավելի թույլ է ընկալվում ի հաշիվ նրա քիչ տարածվածության, սակայն ստուգողական փորձերը վկայում են, որ այն առավել ընկալելի է՝ ի տարբերություն դ 8 կորպուս տառատեսակի,

3. միջին որակի ընթերցողները (գրագետ բանվորներ) չեն կարողանում ընթերցել 5 կվադրատից ավելի երկար տողեր, իսկ բարձր որակի ընթերցողները (ուսանողներ) առավել լավ են ընկալում ավելի երկար տողեր³:

Գ. Էդիլյանը մշում է, որ հաշվի չեն առնվել ցածր որակի կարդացողների և դպրոցականների տվյալները, և դրանց ուսումնասիրման համար անհրաժեշտ են հավելյալ փորձեր: Ինչպես նաև կատարված հետազոտությունն առաջ է բերում նոր հիմնախնդիրներ՝ այն, որ ընթերցողի վրա ազդում է ոչ միայն տառատեսակի տեսքը և տողի երկարությունը, այլև կարդացվող նյութի որակը: Այստեղ Գ. Էդիլյանը ներմուծում է նաև երրորդ փորձարարական փոփոխականը՝ նյութի որակական առանձնահատկությունը (գեղարվեստական, հասարակագիտական և գիտական):

Այս հետազոտությունը կարևորվում է ինչպես վերոհիշյալ երրորդ փոփոխականի հայտնաբերմամբ, այնպես էլ մեր օրերում օգտագործվող «Արամյան» տառատեսակի դյուրընթեռնելիության բացահայտմամբ:

Այս ուսումնասիրության մասին Գ. Էդիլյանը գեկուցում է Մոսկվայի հոգեբանության և պոլիգրաֆիական ինստիտուտների գիտական աշխատավորների միացյալ ժողովում և արժանանում բարձր գնահատականի, իսկ հիմնական արդյունքները տպագրվում են գիտական աշխատանքների ժողովածուում:

«Տաղերի դյուրընթեռնելիության խնդիրը» աշխատությունը նախադրյալ տրամաբանական շարունակությունն է, և այստեղ ուսումնասիրության հիմնական առարկան դպրոցականների դյուրընթեռնելիության հիմնահարցն է: Նպատակն է որոշել, թե դպրոցական դասագրքերն ի՞նչ երկարության տողերով պետք է հրատարակվեն:

³ Տե՛ս Գ. Էդիլյան, մշվ. աշխ., էջ 36:

Այս անգամ Գ. Էդիլյանի կողմից ընտրվում են տողերի ավելի շատ՝ 3^{1/2}, 4, 4^{1/2}, 5, 5^{1/2}, 6, 6^{1/2} և 7 կվադրատ երկարություններ: Հետագոտության համար Գ. Էդիլյանը կազմում է 873 հոգիանոց հետազոտական ընտրանք՝ բաժանված 32 խմբի: Փորձն առավել հավաստի դարձնելու համար Գ. Էդիլյանը նախ և առաջ պարզում է աշակերտների ընթերցման մեկնարկային հնարավորությունները միևնույն տեքստի վրա: Նա ստանում է միջինների հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ I

Աշակերտների ընթերցման մեկնարկային հնարավորությունների միջինը

Խումբ	Մեկ հոգու կողմից մեկ րոպեում կարդացված տառերի քանակը
VIII դաս.	630
IX դաս.	765
X դաս.	829
I կուրս	1029
II կուրս	1011
III կուրս	1048

Ինչպես նկատելի է, կարդալու արագությունը դասարանից դասարան աճում է մինչև առաջին կուրս, որից հետո փոփոխություններն աննշան են դառնում: Սակայն փորձառու հոգեբան-հետազոտող Գ. Էդիլյանի աչքից չի փրկվում խմբերում առկա դիսպերսիայի մեծ ցուցանիշը: Նա նշում է, որ փորձերը ցույց են տալիս, որ դպրոցներում մայրենի լեզվի դասավանդման գործը դրված է վատ հիմքերի վրա, քանի որ մի խմբի աշակերտների մի մասը թույլ է կախված 300-500 տառ, իսկ մյուս մասը՝ 1000 և ավելի: «Սա նշանակում է, - եզրակացնում է Գ. Էդիլյանը, - որ այս տեսակետից անհավասար ուժի տեր աշակերտներ են կողք կողքի նստած: Եթե աշակերտության 32-40%-ը միջին-նորմալ կարդացողներից տարբերվում է բացասական կամ դրական իմաստով, այդ նշանակում է, որ մեր խմբերի կոմպլեկտավորումը սխալ է կատարված: Այդ տարբերությունը 10%-ից չպետք է բարձրանար նորմալ պայմաններում»⁴, - ամփոփում է հետազոտության նախնական բաժինը Գ. Էդիլյանը: Պատկերը նույնն է լինում նաև ուսանողական խմբերում:

Չունենալով բավարար փորձարարական տվյալներ՝ այնուամենայնիվ կնշեն, որ այս խնդիրն առկա է նաև մեր դպրոցներում և համալսարաններում, ուր նույն խմբերում ընդգրկվում են տարբեր հնարավորություններով անձինք: Սա հուշում է, որ այս ուղղությամբ պետք է կատարել հավելյալ հետազոտություններ և ձեռնարկել համապատասխան քայլեր:

Գիտնականն աշակերտների հետազոտական խումբը բաժանում է ութ տարբեր ենթախմբերի և կախված ընթերցման արագության ցուցանիշներից՝ հաշվի չի առնում 400-ից քիչ և 1100-ից ավելի տառ կարդացողների արյույնքները: Աշակերտների հետազոտական խմբում մնում են 450-ից մինչև 1100 տառ կարդացող հետազոտվողները, որոնք էլ բաժանվում են երեք մեծ ենթախմբերի: Փորձարարական հոգեբանությունում և հոգեդիագնոստիկայում այս գործընթացն անվանվում է հետազոտական ընտրանքի նորմալիզացիա, որը նույնիսկ մեր օրերում հազվադեպ հանդիպող երևույթ է (հիմնական հետազոտություններում վերլուծվում են բոլոր հետազոտական տվյալները՝ առանց դիսպերսիոն վերլուծության և նորմալիզացիայի գործընթացի իրականացման): Փաստորեն դեռևս հետազոտող 1933-ին հայ ակադեմիկոս

⁴ Գ. Էդիլյան, Տողերի դյուրընթեռնելիության խնդիրը, Եր., 1933, էջ 23:

գիտնականը իր ստացած տվյալների հանդեպ ցուցաբերում է անաչառ, հետևողական և բժախնդիի մոտեցում:

Հետազոտության հիմնական արդյունքները վկայում են, որ աշակերտների կողմից առավել լավ ընկալելի և արագ են կարդացվում $5\frac{1}{2}$, և $6\frac{1}{2}$ կվադրատ երկաթյան տողերը, և հետևաբար Գ. Էդիլյանը ձևակերպում է այս հետազոտության առաջին գիտագործնական առաջարկությունը, այն է՝ դպրոցական դասագրքերը տպագրել ոչ պակաս, քան $5\frac{1}{2}$, և ոչ ավել, քան $6\frac{1}{2}$ կվադրատ երկաթյամբ տողերով:

Ուսանողների խմբում առավել լավ կարդացվող են 4, $5\frac{1}{2}$ և 6 կվադրատ երկաթյամբ տողերը: Այս հետազոտության հիմնական եզրակացությունը Գ. Էդիլյանը ձևակերպում է հետևյալ կերպ. «...կարդալու գործողության մեջ հմտացած մարդու համար փոքրահասակ երկար տողերի և մեծահասակ կարճ տողերի արժեքը: Սա, ամենայն հավանականությամբ, բացատրվում է նրանով, որ անվարժ կամ քիչ վարժ ընթերցողների համար տողից տող արագ անցնելը դժվար է, վարժ ընթերցողների համար՝ հեշտ»⁵:

Ամփոփելով «Տողերի դյուրընթեռնելիության խնդիրը» աշխատությունը՝ Գ. Էդիլյանը նշում է, որ տողերի դյուրընթեռնելիության խնդրի ուսումնասիրությունը դեռ սպառնալից չէ, քանի որ, մասնավորապես, դեռ սպառնիչ հետազոտված չէ լրիվ գրագետ մարդու ընթերցանության հարցը: Այս հարցին է նվիրված 1935թ.-ին հրատարակված «Տպագրական տողերի դյուրընթեռնելիությունը (բարձրորակ կարդացողներ և գրագետ բանվորներ)» աշխատությունը:

Բառը մի ամբողջական միավոր է, որի իմաստը որոշ չափով նպաստում է դյուրընթեռնելիությանը, սակայն չի կարելի նաև անտեսել տառերի դերն ու նշանակությունը դրա մեջ: Ահա թե ինչու հետազոտությունները առավել ամբողջական դարձնելու համար Գ. Էդիլյանը տառատեսակի և տողերի երկարության ուսումնասիրությունից հետո իր պարտքն է համարում փորձարարական ճանապարհով ուսումնասիրել բառերի բաղկացուցիչ մասերի՝ տառերի ընկալման և դյուրընթեռնելիության հիմնահարցերը: Գ. Էդիլյանը ուսումնասիրության նպատակը բաժնում նշում է. «... տառ-էլեմենտների ըմբռնման առանձին ակտերի հարցի ուսումնասիրությունը մասամբ լույս կսփռի բառերի դյուրընթեռնելիության հարցի վրա: Հենց այդ իմաստով էլ մենք ուսումնասիրեցինք առանձին տառերի դյուրընթեռնելիության հարցը: Ուսումնասիրության արդյունքները, ինչպես կտեսնենք, ցույց տվին, որ մեր այս ենթադրությունը ճիշտ է եղել»⁶:

Հետազոտությունն իրականացվել է մանկավարժական ինստիտուտի 20 ուսանողների հետ, սակայն արդյունքներն այնքան հստակ են լինում, որ Գ. Էդիլյանը որոշում է չմեծացնել ընտրանքի չափերը:

Փորձն ընթանում է հետևյալ կերպ. կազմվում է հայկական փոքրատառերի (դասագրքի դ 36 տառատեսակ) ցուցանակ հինգ շարքով՝ յուրաքանչյուրում յոթական տառ: Հետազոտվողները կանգնում են այնպիսի հեռավորության վրա, որ չտեսնեն տառերը, և ամեն անգամ 25 սանտիմետր մոտենալով՝ փորձում են կարդալ տառերը, այնքան ժամանակ, մինչև բոլոր տառերը ճշգրտորեն կարդացվեն: Փորձարկողը նշում է, թե որ տառերն են առաջինը նկատվում, և որոնք են դժվար կամ սխալ կարդացվում:

Այժմ անդրադառնանք հայերեն տառերի ընկալման կարևորագույն հետազոտություններից մեկի հիմնական եզրակացություններին, որոնք էական արժեք

⁵ Նույն տեղում, էջ 29-40:

⁶ Գ. Էդիլյան, Հայկական տպագիր տառերի դյուրընթեռնելիության խնդիրը, Եր., 1933, էջ 5:

ունեն ինչպես հոգեբանների համար՝ ընկալման հոգեբանության և հոգեբանական հոգեբանության մոտեցումների ոլորտներում, այնպես էլ հայկական տառատեսակի մշակմամբ զբաղվող մասնագետների համար: Այս եզրակացությունները ստացվել են «Հայպետիրատի» պատվերով, օգտագործվել են 75 տարի առաջ հայկական տառատեսակի բարելավման համար և անցել մոտացության գլխիկը:

Գ. Էդիլյանի փորձարարական տվյալները արտացոլում են հետևյալ օրինաչափությունները .

Լավ են կարդացվում՝

1. վերից վար տառերի (ի, փ և այլն) 100%-ը,
2. տողից վեր տառերի (ն, հ և այլն) 87,5%-ը,
3. տողից վար, կախված տառերի (լ, գ և այլն) 14%-ը,
4. կարճ տառերի (ա, տ և այլն) 0%-ը:

Միայլ են կարդացվում՝

1. կարճ տառերի (ա, տ և այլն) 83%-ը,
2. տողից վար, կախված տառերի (լ, գ և այլն) 57%-ը,
3. տողից վեր տառերի (ն, հ և այլն) 12,5%-ը,
4. վերից վար տառերի (ի, փ և այլն) 0%-ը:

Բոլորովին չեն կարդացվում՝

1. կարճ տառերի (ա, տ և այլն) 17%-ը,
2. տողից վար, կախված տառերի (լ, գ և այլն) 29%-ը,
3. տողից վեր տառերի (ն, հ և այլն) 0%-ը,
4. վերից վար տառերի (ի, փ և այլն) 0%-ը⁷:

Այս տվյալները չափազանց հետաքրքրական են այն տեսանկյունից, որ հայկական տպագիր կարճ տառերն անորոշ կամ իրար շատ մեծ ձևեր ունեն, սակայն ամենևին էլ ոչ այն պատճառով, որ փոքր են: Ինչպես նաև դժվար են կարդացվում տողից վար տառերը, որը չափազանց կարևոր հիմնախնդիր է հենց միայն այն պատճառով, որ այդ տառերը գործածության տեսանկյունից մեր բոլոր տառերի 40%-ն են կազմում: Այս տեսանկյունից Գ. Էդիլյանը հատկապես կարևորում է այդ տառերի բարեփոխման խնդիրը՝ տալ նրանց որոշակիություն, բարձրացնել տողից վեր կամ տողի վրա: Ինչպես նաև կարևորվում է տողից վերև ելնող տառերի ավելացման խնդիրը, քանի որ դրանք նպաստում են դյուրընթեռնելիությանը:

Գ. Էդիլյանը քննադատում և փորձարարական ճանապարհով մերժում է նաև այն միտքը, որ առավել հաճախ գործածվող տառերն են առավել դյուրընթեռնելի: Հիմնական խնդիրը, ըստ Գ. Էդիլյանի, ձևի տեսանկյունից հայկական տառերի մեծ մասի նմանությունն է: Ստացված տվյալները վկայում են, որ խառնվում են հետևյալ տառերը.

1. բ, ր, ը - այս տառերի գծագրական տեսքը մշակելիս միջտ պետք է հիշել, որ երեքն էլ իրար են խառնվում, որովհետև երեքն էլ գծագրական մույն կմախքն ունեն,

2. դ, գ, ո, գ, ց - այս տառերն իրար մեծ են իրենց վերևի, գլխի մասով և ներքև իջնող հիմնական հաստ գծով: Շրիֆտի բարեփոխման ժամանակ նախ և առաջ պետք է հատուկ շեշտել իրարից տարբերվող մասերը և սրանք տողի զանազան մասերում տեղավորել,

3. չ, շ - ընդ որում, շ-ն համեմատաբար կայուն ձև ունի և պետք է հատուկ ուշադրություն դարձնել չ-ի բարեփոխմանը,

4. ո, ո, ս - սրանք իրար մեծ են թե՛ մեծությամբ, թե՛ ձևով:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 9:

5. տ, ու, ա - նույնը կարելի է ասել նաև այս երեք տառերի մասին*:

Փաստորեն 75 տարի առաջ Գ. Էդիլյանը խիստ կարևորում է հայկական տառատեսակի բարելավման հիմնահարցը և, ավելին, առաջարկում է կատարելագործման հիմնական ուղեցուցիչները, տալիս կոնկրետ գիտագործնական առաջարկություններ: Մակայն պետք է փաստել, որ նրա նկատած թելուքայինները չեն վերացվել, և այդ ուղղությամբ, կարելի է ասել, համարյա աշխատանք չի տարվել: Մինչդեռ հայկական նոր տառատեսակների մշակմամբ զբաղվողները պնդում են, որ կարիք ունեն լուրջ գիտական ուսումնասիրությունների և խորհուրդների այս ոլորտում արդյունավետ աշխատելու համար:

Այս աշխատությունում Գ. Էդիլյանը քննարկում և վերլուծում է Լ. Յաղոբյանի մշակած նոր տառատեսակի առավելությունները և թելուքայինները: Այս ուղղությամբ մենք այսօր էլ կարիք ունենք գրագետ փորձարարական հետազոտությունների իրականացման, որոնք թույլ կտան հայտնաբերել ավելի ուշ ժամանակաշրջանում մշակված հայկական տառատեսակների առանձնահատկությունները:

1935թ. լույս տեսած «Տպագրական տողերի դյուրընթեռնելիությունը (բարձրարակ կարդացողներ և գրագետ բանվորներ)» աշխատությունը ամփոփում է Գ. Էդիլյանի հոգեբանական և ընկալման հոգեբանության ոլորտներում կատարած հայ իրականության համար հատուկ կարևորություն ներկայացնող հետազոտությունների շարքը:

Նույն մեթոդիկայով, որով Գ. Էդիլյանը ուսումնասիրել էր դպրոցականներին, 1934թ. աշխատում է գրագետ կարդացողների հետազոտման ժամանակ, ուր ընդգրկվել են ընթերցողների երկու խումբ՝ բանվորներ և ուսանողներ: Այս ուսումնասիրությունը թույլ է տալիս պարզել, որ թե՛ բանվորները, թե՛ ուսանողները առավել արագ և արդյունավետ են կարդում 4 կվադրատ երկարության տողերով գրված տեքստը: Գ. Էդիլյանը կարծում է, որ սրա հիմնական պատճառն այն է, որ այս կատեգորիայի ընթերցողները հաճախ լրագիր են կարդում և նրանց ընկալումը վարժվում է կարճ տողերը դյուրությամբ կարդալուն: Գիտնականը, ելնելով մի շարք պատճառներից, խորհուրդ չի տալիս օգտագործել այս երկարություն ունեցող տողերը գրքեր տպագրելիս: «Ավելի ցանկալի են միջին երկարության՝ 5, 5½ և միջինից մի փոքր երկար՝ 6½ կվադրատ երկարության տողերը, որոնք կարդացվում են իրար շատ մեծ արագությամբ: Այս տողերը 4 կվադրատի համեմատությամբ տալիս են 2,2-2,9% շեղում: Այս չնչին առավելության համար 4 կվ. երկարության տողին հատուկ արժեք չպետք է տալ, քանի որ այդ տողով մեծ գրքեր տպագրելու հետ կապված են զգալի անհարմարություններ»:

Ժամանակի պահանջի նուրբ զգացողությունը Գ. Էդիլյանին ուղղորդեց ուսումնասիրելու հայկական տառատեսակի ընկալման, տողերի դյուրընթեռնելիության խնդիրները: Այդ օրերից անցել են բազում տարիներ, որոնց ընթացքում լույս աշխարհ են եկել նոր տառատեսակներ, որոնք, սակայն, գործածության մեջ են մտնում առանց լուրջ հոգեբանական փորձաքննություն անցնելու: Մեր համակարգչային ծրագրերում ընտրվում է աչքին հաճելի տառատեսակը (օրինակ՝ Arial LatArm, Times Armenian, Times LatArm, Arial Tarumian և այլն)՝ առանց խորապես գիտակցելու, թե այն ինչպես կընկալվի ընթերցողի կողմից, քանի որ այդ ուղղությամբ ընդհանրապես չեն կատարվել համապատասխան հետազոտություններ: Գրքի ձևավորման հնարների զարգացման շնորհիվ մեր օրերում գրքեր են

* Տե՛ս նույն տեղը, էջ 21-26:

* Գ. Էդիլյան, Տպագրական տողերի դյուրընթեռնելիությունը, Եր., 1935, էջ 23-24:

տալագրվում տարբեր ֆորմատներով, և այս ուրախում նույնպես հաշվի չեն առնվում տողերի երկարության ընկալման հիմնահարցերը: Հիրավի, այստեղ առկա են դեռևս չլուծված բազում խնդիրներ, որոնք համապատասխան մասնագիտական և գիտական մոտեցում են պահանջում: Սա էր կարևորում հայ ականավոր հոգեբանը մյուս այլ մանկավարժական և հոգեբանական հարցերի շարքում:

Այս հիմնախնդիրները լուծելու կարողությունը անմիջականորեն կապված է մեր մեծերին ճանաչելու, նրանց հետազոտությունների հիմնական արդյունքներին ծանոթանալու ցանկությունից: Անհրաժեշտ է առնվազն ունենալ այն գիտակցումը, որ մենք հայ հոգեբանությունը չենք սկսում «նոր էջից»:

Հասկանալի պատճառներով Լ. Պ. Ալեքսանյանն իր գրքում չի նշում, որ Գ. Էդիլյանը մահացել է արքայում: Եվ միայն 1985-ին է համարձակություն ունենում ակնարկել. «... ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում ընդհատվեց նրա գործունեությունը: 1942թ. հունվարի 18-ին մեծ գիտնականն ու մանկավարժը վախճանվեց Օմսկ քաղաքում»¹⁹:

Անհատի պաշտամունքի տարիներին ոչ միայն ընդհատվել է Գ. Էդիլյանի կյանքը, այլև գրապահոցներում մոռացության է դատապարտվել նրա գիտական ժառանգությունը՝ մեզ հասանելի մնալով միայն այն, ինչը թույլատրելի էր ժամանակի ոգուն: Եվ այսօր իննսունամյա մայր բուհի հոգեբանների գլխավոր խնդիրներից մեկն էլ Գ. Էդիլյանի և մյուս հայ ականավոր հոգեբանների գիտական ժառանգության պատառիկների միավորմամբ հայ հոգեբանական մտքի ընդհանրական պատմության ձևավորումն է:

Դ. Ք. АЙРАПЕТАН - *Одна из забытых страниц армянского психологического наследия.* - В статье обсуждаются уникальные психологические исследования армянского шрифта, сделанные Г. Эдилянном еще в 1933-35гг. Основные результаты своих исследований ученый изложил в нескольких печатных пособиях и статьях, которые вскоре после их издания затерялись на полках национальной библиотеки. Подчеркивается уникальность, научность и результативность разработанных Г. Эдилянном методик для исследования поставленных проблем. В связи с беспрецедентным развитием печатного дела и разработкой десятков новых армянских шрифтов подчеркивается актуальность и востребованность новых исследований в этой сфере, а также необходимость восстановления забытых и затерянных научных разработок в частности в сфере армянской психологической мысли.

¹⁹ Լ. Պ. Ալեքսանյան, Գուրգեն Էդիլյան: Կենսամատենագիտություն, Եր., 1985, էջ 26: